



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ն

07-ը Մարտի 2018թ.

գ. Կարդաձոր

Աղբահանության հետագա աշխատանքների կապակցությամբ պարտավորություն ստանձնելու մասին

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Կարդաձոր համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով: Հարցը քվեարկվեց՝

Կողմ

դեմ

ծեռնպահ

1. Սարգսյանի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3. Աղասի Հովհանյան

4. Մամիկոն Նազարյան

5. Նորայր Սիրականյան

6. Ռուստամ Ներսիսյան

Համայնքի ղեկավար

Արձանագրող՝



(Handwritten signatures in blue ink)

Ռոբերտ Սիրականյան

Գուրգեն Ղազարյան